# ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՆ ԱՅՑԵԼԵԼ ԵՆ «ԵՌԱԲԼՈՒՐ» ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՆԹԵՈՆ

28.01.2023 15:11



Բանակի օրվա առթիվ Հայաստանի Հանրապետության փաստաբանական համայնքի ներկայացուցիչներն այցելել են «Եռաբլուր» զինվորական պանթեոն և հարգանքի տուրք մատուցել իրենց կյանքը հայրենիքի անկախության համար զոհաբերած հայորդիների հիշատակին:

Փաստաբանները ծաղիկներ են խոնարհել զոհված հերոսների հիշատակը հավերժացնող հուշակոթողին և շիրիմներին:

Եռաբլուրում ննջում են նաև փաստաբանների զավակներ, ովքեր Հայկական բանակի անպարտելիության ու հայրենիքի պաշտպանության համար չխնայեցին իրենց կյանքը:

Հավերժ փառք և խոնարհում նվիրյալ հերոսների հիշատակին:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })